

## Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձոր մարզպետարանի քարտուղարության կողմից 2022թ-ի ինն ամիսների ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում իրականացվե է ընդամենը 22101 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 7492մտից, 6367 ելից, 8.242 ներքին:

**2022թ-ի ընթացքում ստացվել է 878 դիմում:**

**ա/** Դրամական օգնություն է խնդրել 538 քաղաքացի: 454 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 80-ինը՝ մերժվել է, 4-ը ընթացքի մեջ է:

**բ/** Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 19 քաղաքացի, բոլոր 19 դիմումներին պատասխանվել է:

**գ/** Առողջապահական բնույթի 2 դիմում է ստացվել, ստացված 2 դիմումներն էլ բավարարվել են:

**դ/** Աշխատանքի հարցերով դիմել է 27 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

**ե/** Գյուղատնտեսական հարցերով դիմել է 28 քաղաքացի, 28-ին տրվել է դրական պատասխան:

**զ/** Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 15 քաղաքացի և ստացել են դրական պատասխան, 1 դիմում էլ ընթացքի մեջ է:

**է/** Հողաշինության հարցերով դիմած քաղաքացիներից 14-ին էլ տրվել է դրական պատասխան:

**ը/** Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 35 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

**թ/** Ստացվել է այլ բնույթի 200 դիմում: